Խմբագրութիւնս տխուր պարտք մը հասուցանելու հարկին մէջ կը գտնուի։ Ամենազբաղ հմուտ և արդիւնական աշխատակիցն, հետևեալ՝ ինչպէս նաև նախընթաց տարիներու մէջ հրատարակուած այլ և այլ ազգային հետաքննական յօդուածոց հեղինակն, Հ. ՔԵՐՈՎԲԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՔՈՒՇՆԵՐԵԱՆ ոչ եւս է։ Անակնկալ մահ մը, զեռ կորովի և յուսալից հասակին, յափշտակեց վերցուց զինքը յ՝ 9 յուլիսի, ի Ռասթով, յՈվսէս, յընտանեացն և բազմաթիւ բարեկամաց, ամենուն անմխիթար սգովը փոխադրուելով յանանց և յանմահական աշխարհն կենդանեաց։ Քանի՛ հինգ տարուընէ ի վեր, ճշմարիտ առաքելաշնորհ անձ ի հայրենիս իւր ի Տաւրիա, զիտցաւ ամենուն սէրը, սիրան ու համակրութիւնն գրաւել անխոնջ աշխատանօք, անձնանուէր եռանդեամբ և սիրաշահ վարմամբ. որովք արժանացաւ Պետական ոսկի խաչի, և ի Գեր. վիճակաւորէն Սարաթովի՝ Տաւրիոյ թեբակղզւոյն Նախերիցութեան (Decanus) պաշտաման։

Մեծարգոյ և սիրելի Հանգուցեալն՝ այս բարեմասնութեանց հետ միացուցած էր նաև բազմալեզու գիտութիւն և ուսումնասէր զոլելի հետամտութիւն։ Ծանօթ և հաճոյ են ազգայնոց՝ իր վարժ գրչին արգասիք Աւակներն՝ յերկուս հատորս, Յարաստութիւնք ի Սաղմոս, և Տաւրիոյ ու Լեհաստանի ազգային գաղթականութեանց և յիշատակաց վրայ մանրամասն և մանրապատում տեղեկութիւնք, զորս կը յուսանք քիչ ատենէն ի մի հատոր ամփոփելով նաև առանձին տպագրութեամբ ընծայել ազգիս։